

Համաձայնեցված է
Հայաստանի Հանրապետության
ֆինանսների նախարար

_____ Վ. Գաբրիելյան

Հայաստանի Հանրապետության
կառավարությանն առընթեր պետական
եկամուտների կոմիտեի նախագահ

_____ Գ. Խաչատրյան

20.02.2013թ.

N 4

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 1-ԻՑ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏԱԾ «ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԿԻՐԱՐԿՄԱՄԲ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ՀԱՎԱՍԱՐԵՑՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՅՏԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի (22.12.2010թ., ՀՕ-246-Ն, այսուհետ՝ Օրենք) 13-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, հարկային գործակալները պարտավոր են յուրաքանչյուր ամսվա համար այդ ամսվան հաջորդող ամսվա 20-ից ոչ ուշ բացառապես էլեկտրոնային եղանակով հարկային մարմին ներկայացնել՝

1) նոր աշխատողի (այդ թվում՝ վարձու աշխատողի) համար գրանցման հայտ, որտեղ ներառվում են անհատական տեղեկություններ (անունը, ազգանունը, հայրանունը, բնակության (հաշվառման) վայրը, հանրային ծառայությունների համարանիշը (սոցիալական քարտի համարը), ինչպես նաև «Եկամտային հարկի և կուտակային վճարի անձնավորված հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածով սահմանված այլ տեղեկություններ)։

2) Եկամտային հարկի ամփոփ հաշվարկ, որտեղ ներառվում են տվյալ հարկային գործակալից եկամուտներ ստացող (բացառությամբ միայն պասիվ եկամուտներ ստացողի) ֆիզիկական անձանց համար հաշվարկված (քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում աշխատանքների կատարման (ծառայությունների մատուցման) դիմաց վճարված) եկամուտների, այդ եկամուտներից պահված եկամտային հարկի, իսկ կուտակային կենսաթոշակային համակարգում ներառված անձանց մասով՝ նաև հաշվարկված և պահված կուտակային վճարների վերաբերյալ անհատական տեղեկություններ։

«Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, Օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մինչև Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով սահմանված եկամտային հարկի ամփոփ հաշվարկը առաջին անգամ ներկայացնելը, հարկային գործակալները պարտավոր են մինչև նշյալ հաշվարկն առաջին անգամ ներկայացնելու պահը իրենց մոտ գրանցված վարձու աշխատողների համար հարկային մարմին ներկայացնել սույն օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով սահմանված գրանցման հայտերը։

«Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի (13.11.2012թ., ՀՕ-201-Ն) 1-ին հոդվածի համաձայն, Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի խմբագրմամբ նվազեցվող եկամուտ սահմանվեց «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-36-րդ հոդվածների համաձայն՝ զինծառայողներին և նրանց հավասարեցված անձանց մատուցված ծառայությունները կամ բնամթերային (ոչ դրամական) ձևով ստացված եկամուտները, ինչպես նաև պարտադիր զինվորական ծառայության զինծառայողների (կուրսանտների) դրամական բավարարումը և դրան հավասարեցված վճարումները: Զինծառայողների և նրանց հավասարեցված անձանց նույն կետում չնշված դրամական բավարարման գումարները ենթակա են հարկման եկամտային հարկով Օրենքով սահմանված ընդհանուր կարգով:

Հաշվի առնելով վերը նշվածը, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ առանձին անձանց վերաբերյալ տեղեկատվությունն որպես սահմանափակ օգտագործման ենթակա սահմանված լինելը, ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ մասով, ***պաշտոնապես պարզաբանում եմ.***

1) Օրենքի 29-րդ հոդվածի 3-րդ մասով և 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով սահմանված դրույթները կիրառելի են այն անձանց մասով, որոնց վերաբերող՝ գրանցման հայտում ներառվելիք տեղեկատվությունը օրենսդրությամբ սահմանված չէ որպես սահմանափակ օգտագործման ենթակա տեղեկատվություն:

2) Հարկային գործակալները գրանցման հայտեր չեն ներկայացնում այն անձանց համար, որոնց վերաբերող՝ գրանցման հայտում ներառվելիք տեղեկատվությունը օրենսդրությամբ սահմանված է որպես սահմանափակ օգտագործման ենթակա տեղեկատվություն: Այդ անձանց համար հաշվարկված ամսական դրամական բավարարման և այդ բավարարումից պահված եկամտային հարկի հանրագումարները ներառվում են ՀՀ ԿԱ ՊԵԿ 21.01.2013թ. «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հունիսի 7-ի N 175-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 22-Ն հրամանի Հավելված 1-ով հաստատված՝ «Եկամտային հարկի ամսական ամփոփ հաշվարկ»-ի «Զինծառայողներ և նրանց հավասարեցված անձինք» 1.16 տողում: